գրամն վասն անդէպ գնացից նորա։ Եւ նա գիւահաբեալ անարգէր զմեծամեծս մինչև ցփոքունս և զհաւատ նոցին՝ ուր որ պատահէր, և քարիւ և փայտիւ հարկանէր զնոսա։ Վասն որոյ և ի գրանէն մուն զուր աղայի եդին արս պահել զնա ուր և երթիցէ ի ճանապարհ, և ոչ կարէին սանձել, այլ կալեալ եդին ի բանտ և ի կապանս երկաթի ընդ այլ դիւաբախիցն զբաղում աւուրս։ Եւ ապա հանեն, և ոչ էր պակասեցուցեալ զայն որ առնէր, եւ կրկին եդին անդ։ Եւ յորժամ հանեն՝ լինէր գարշելի, պիղծ և ատելի մարդկան տեսողաց ամենայն կերպիւն, որ ոչ կարէր ժուժել. գնաց յէտրէնէ եւ անդ եւս խայտառակեալ, զոր իմացեալ բռնակալաց՝ զմազ և զմօրուս նորա խուզեալ և դնեն ի բանտ. և կայր յայնպիսի կեանս մահաբերս, որ բազում քրիստոնէից քաղաքացոցս դրամ կորեաւ, որ ունէին ի վերայ նորա։

Աստ գրեա՛ զգնալն Աստուածատուր վարդապետին ի գիւղս և յիզմիր և զդրամ առաքելն. նոյնպէս և զնվիրակն ամենայն և զտունն, և զկաֆայեցոց օրինազանցութիւն բանադրանօք հանդերձ։

Եւ յորժամ առաքեաց զՃիւան պարոնն առ յՈւլահ, ընդ նմա եդ և զՖազլին զի նստուցանէ զնա յաթոռ եւ զառաջինն կորուսցէ։ Տարեալ նստոյց ի գահ Ուլահին և առաջինն փախեաւ և զանհնազանդն սպան։ Յետ ամսոց մինչև ելեալ էր վէզիրն, առաքեաց արս հրամանաւ ի ձեռն Ղատիր ֆաչայի, որ նստէր նա ի Սիլիստրէ, զի զՃ քսակ պահանջիցէ ի պարոնէն. և յորժամ առաքէր զայն ինչ պատգամ, յղէր և պարոնն արս իմաստունս խօսել առ նա թէ Նոր առի զգահս իմ ի միջի պարտուց եւ ուստի՞ ունիմ զայդքան դրամ զոր խնդրէքն։ Եւ Ղատիրն սպան